

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի «Հայաստանի Հանրապետությունում սեռավարակների կանխարգելմանն ուղղված 2015 – 2020 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին» հրամանի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետությունում սեռավարակների կանխարգելմանն ուղղված 2015 – 2020 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանի անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը» հաստատելու մասին N 1913-Ն որոշումն առնելով 2-ով սահմանված միջոցառումների ցանկի 10-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջով:

Ամբողջ աշխարհում սեռական ճանապարհով փոխանցվող վարակները (այսուհետ՝ սեռավարակներ) բեռ են հանրային առողջապահության և տնտեսության համար՝ հատկապես զարգացող երկրներում, ուր դրանց մասնաբաժինը կազմում է առողջության հետ կապված տնտեսական վնասի 17 տոկոսը: Արդեն երկար տարիներ է սեռավարակները համարվում են հանրային առողջապահության գերակա խնդիրներից մեկը::

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների 2013թվականի ընթացքում աշխարհում սեռավարակներով հիվանդացել է 1 միլիարդից ավել մարդ. այսպես՝ 500 միլիոն մարդ հիվանդացել է չորս հիմնական հիվանդությամբ՝ քլամիդիոզ, գոնորեա, սիֆիլիս, տրիխոմոնոզ, 530 միլիոն մարդ՝ սեռական հերպեսով, 290 միլիոն կին՝ մարդու պապիլոմայի վիրուսով:

Տարեկան միլիոնավոր մարդիկ սեռական ճանապարհով վարակվում են նաև ՄԻԱՎ վարակով, հերպեսով, հեպատիտ Բ-ով: Որոշ սեռավարակներն են կարող են ՄԻԱՎ-ով վարակվելու վտանգը բարձրացնել երեք և ավելի անգամ: Տարեկան 530000

կին մարդու պապիլումայի վիրուսով վարակվածության պատճառով հիվանդանում է արգանդի վզիկի քաղցկեղով, նրանցից 275000-ը մահանում են:

Հայաստանի Հանրապետությունում վերջին հինգ տարվա ընթացքում դիտվել է սեռավարակներով հիվանդացածության աճ: Անախտանշան ձևերի բարձր տարածվածություն ունեն միզասեռական կանդիդոզը, գարդներեյյոզը, տրիխոմոնազը, ուռետալազմոզը և սիֆիլիսը:

Ներկայում Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ռիսկի քանակակազմի պատվաստում հեպատիտ Բ-ի նկատմամբ, սակայն արգանդի վզիկի քաղցկեղի կանխարգելման համար պապիլումա վիրուսի դեմ պատվաստումները ընդգրկված չեն պատվաստումների ազգային օրացույցի մեջ:

Սեռավարակների կանխարգելմանն ուղղված ազգային ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում սեռական ճանապարհով փոխանցվող վարակիչ հիվանդություններով վարակվածության կանխարգելումը, ինչպես նաև հիվանդացության և սեռավարակների բարդություններից մահացության նվազեցումն է:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի «Հայաստանի Հանրապետությունում սեռավարակների կանխարգելմանն ուղղված ազգային ծրագիրը հաստատելու մասին» հրամանի ընդունման դեպքում սեռական ճանապարհով փոխանցվող վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողությունը կհամապատասխանեցվի միջազգային մոտեցումներին և կլինի համակարգված:

«Հայաստանի Հանրապետությունում սեռավարակների կանխարգելմանն ուղղված ազգային ծրագրի» ծրագրի ֆինանսավորումը նախատեսվում է պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից:

«Հայաստանի Հանրապետությունում սեռավարակների կանխարգելմանն ուղղված ազգային ծրագրի» մշակման ընթացքում հաշվի են առնվել ՀՀ ԱՆ «Մաշկաբանության եվ սեռավարակաբանության բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի ՀՀ ԱՆ «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՀՀ ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչության մասնագետների կարծիքները: